«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Հաստատություն՝ 22 մանկապարտեզ

Դաստիարակ՝ **Աննա Վարդանյան**

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն ----------3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Բաժին 1. Երեխայակենտրոն ուսուցում ----------**4**

1.1 Ինտեգրված ուսուցում ----------7

Գործնական մաս

Բաժին 2. Հետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, ընթացքը----------**9**

2.1 Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը--**9**

2.2 Ինտեգրված պարապմունքների պլան-կոնսպեկտ-**11**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------**16**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------**17**

Ներածություն

Մեր օրերում մեծ է մանկավարժի կատարած աշխատանքը: Մանկավարծը ձևավորում է մարդ, որը ազգի և պետության հիմնարար արժեքների կրողն է: Մանկավարժը կոչված է իրականացնելու մի շարք մասնագիտական գործառույթներ: Այդ գործառույթներից կարևորվում է ուսումնական պարապմունքների կազմակերպումը մանկավարժական գործընթացում: Դրանց շնորհիվ երեխաները ձեռք են բերում այնպիսի գիտելիքներ ու հմտություններ, որոնք չեն կարող յուրացնել ազատ գործունեության ընթացքում:

Ժամանակակից աշխարհում կրթական բարեփոխումների հետ փոխվում են նաև նախադպրոցական ուսումնական հաստատության կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերը, մեթոդները և միջոցները:

ՀՀ Սահմանադրությամբ և <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքով ամրագրված է, որ նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ստանալ նախադպրոցական կրթություն:[1][2]

Կրթական համակարգում շարունակ կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մոտեցումներ՝ բովանդակային և կազմակերպչական խնդիրների լուծման ժամանակ, որը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Այդ պատճառով ստեղծվել են ինտեգրված, ինչպես նաև՝ համալիր պարապմունքներ, որոնք ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից են:

Հետազոտական աշխատանքի նպատակն է նշել ինտեգրված պարապմունքների կազմակերպման ձևերը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում: Հետազոտական աշխատանքի խնդիրն է ծանոթացնել ինտեգրված պարապմունքներ:

[1] ՀՀ Սահմանադրություն

[2] <<Նախադպրո ցական կրթության մասին>> ՀՀ օրենք

Բաժին 1

Երեխայակենտրոն ուսուցում

Մարդը բնության մեջ կատարյալ էակ է: Ուստի, յուրաքանչյուր նոր ծնված երեխա լուսավոր ապագայի խորհրդանիշ է: Յուրաքանչյուր երեխա լիարժեք ապրելու իրավունք ունի, յուրաքանչյուր երեխա ունի զարգանալու և սովորելու երեխայակենտրոն, ներառական և անվտանգ միջավայրում, որտեղ հաշվի կառնվեն յուրաքանչյուր երեխայի մտավոր,հոգեկան,ֆիզիկական և հոգևոր զարգացման առանձնահատկությունները: Յուրաքանչյուր երեխա ունի կարծիք արտահայտելու իրավունք:

Մարդու կյանքում ամեն ինչ սկսվում է մանկությունից: Այն, ինչ երեխան ձեռք է բերում մանկության շրջանում, նրան ուղեկցում է ամբողջ կյանքում: <<Կյանքի սկզբնական շրջանում երեխան զարգանում է, ընկալում աշխարհն ու արձագանքում արտաքին միջավայրին՝ իրեն շրջապատող մեծահասակների միջնորդությամբ>>[3]

Յուրաքանչյուր երեխա ինքնատիպ է: Եվ երեխային օգնելու համար անհրաժեշտ է ճանաչել նրա ներքին աշխարհը: Բացահայտելով և ճանաչելով երեխայի առանձնահատկությունները՝ կարելի է նրան ուղեկցել ինքնահաստատման բարդ ճանապարհին: Երեխայի հետ առնչվող ցանկացած մեծահասակ դաստիարակողի դերում է, հեղինակություն երեխայի համար: << Այն երեխան, որը մանկության շրջանում իր դաստիարակներին և ուսուցիչներին չի ընկալել իբրև հեղինակությունների, երբևէ չի կարող դառնալ ազատ մարդ>>[4]

Փաստորեն, դաստիարակությունը չափազանց կարևոր գործընթաց է : Եվ հարկ է հիշել Պիկարևի հայտնի խոսքերը. << Դաստիարակության մեջ ամբողջ խնդիրը նրանում է, թե ով է դաստիարակը>>: Երեխային ուղղորդելու համար անհրաժեշտ է հասկանալ նրան, գիտակցել, որ փոքրիկ մարդուկն ունի կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, կասկածելու, որոշումներ կայացնելու իրավունք: Եվ հմուտ մանկավարժը պետք է սիրի և զգա փոքրիկին իր ամբողջ սրտով, վստահի և հավատա նրան:

---

[3] Ս. Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան՝ <<Նախադպրոցական մանկավարժություն>>

[4] Ռ. Շտայներ՝ <<Ազատության փիլիսոփայություն>>

Ժամանակակից նախադպրոցական դիդակտիկան առաջ է ընթանում զարգացնող սկզբունքներով՝ բովանդակության, նոր միջոցների և մեթոդների մշակմամբ, որոնք աստիճանաբար մուտք են գործում նախադպրոցական կրթության համակարգ: Նախադպրոցական տարիքում ձևավորվող ուսումնական գործունեությունը նախապատրաստում է երեխային դպրոցում սիստեմատիկ ուսումնառության:

Ուսումնական գործընթացը փոխներգործություն է, որի արդյունավետությունը պայմանավորված է երեխաների և մանկավարժների փոխհարաբերություններով, մանկավարժական հաղորդակցման ոճով:

Ոճը բխում է հասարակության կողմից ներկայացվող պահանջներից, գերակա խնդիրներից: Ժամանակի ընթացքում ետ մղվեցին մանկավարժական հաղորդակցման ինքնիշխան և հարմարվողական ոճերը և ժողովրդավարական հասարակությունը պետք է նախընտրեր մանկավարժական հաղորդակցման ժողովրդավարական ոճը: Այս ոճին համապատասխանում է անհատակողմնորոշիչ մոդելը: Ուսուցման այս մոդելի նպատակն է ուսուցման ընթացքում յուրաքանչյուր երեխայի անհատականության ձեռքբերումը: Մոդելի հիմքում ընկած է Շ.Ա. Ամոնաշվիլու կողմից նկարագրված մարդասիրական , անձնային մոտեցումը երեխային, հավատն ու վստահությունը նրա ներքին ուժերի նկատմամբ: Մոտեցման գաղափարն է. <<Երեխան կարող է սովորել, եթե ուզում է>>, հետևաբար անհրաժեշտ է խրախուսել սովորելու ցանկությունը և պատշաճ գնահատելու ունակությունները:[5]

Ուսուցման անհատակողմնորոշիչ մոդելի հիման վրա կառուցվում է մանկավարժական տեխնոլոգիա, որի հիմնական ուղղություններն են՝

- Երեխայի ակտիվ մասնակցության ապահովումը ուսուցման փոխգործուն մեթոդների կիրառման միջոցով,
- Երեխաների հետ երկխոսության և համագործակցության հաստատումը,
- Փոխըմբռնման մթնոլորտի ստեղծումը,
- Ուսուցման զարգացնող ուղղվածության ապահովումը երեխաների ինքնուրույն փորձարարական գործունեության կազմակերպմամբ,

[5] <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>

- Ուսուցման ընթացքում երեխայի ինքնակառավարման սկզբունքների հաստատումը,
- Ուսուցման իրականացումը համատեղ գործունեության ընթացքում, ուր և՛ երեխան, և՛ դաստիարակը նույն հարթության մեջ են:

Ժամանակակից դիդակտիկան մշակում է ուսուցման նորանոր տեսակներ՝

- Ուղղակի ուսուցում
- Պրոբլեմային ուսուցում
- Միջնորդավորված ուսուցում:

Ուղղակի ուսուցման ընթացքում դիդակտիկ խնդիրը երեխաներին առաջադրում է մանկավարժը: Այս դեպքում երեխայի կողմից ձեռք են բերվում <<պատրաստի>> գիտելիքներ:

Պրոբլեմային ուսուցման ընթացքում երեխան ինքն է փնտրում, գտնում, ինքնուրույն ձեռք բերում գիտելիքներ: Այստեղ երեխան հանդես է գալիս ինքնուրույն սովորողի դերում:

Միջնորդված ուսուցման կաիգախոսն է. <<Սովորեցիր ինքդ, սովորեցրո՛ւ ընկերոջդ>>: Ուսուցման էությունը զարգացնող միջավայրի կառուցման մեջ է: Զարգացնող միջավայրը նպաստում է երեխաների համագործակցությանը:

Ուսուցման գործընթացը մանկապարտեզում կազմակերպվում է երեք հիմնական ձևերով: Ուսուցման կազմակերպման ամենատարածված ձևը **պարապմունքն է**: Համալիր պարապմունքների ընթացքում լուծվում են դիդակտիկ խնդիրները՝ երեխաներին ներգրավվելով գործունեության տարբեր ձևերի մեջ: Ինտեգրված պարապմունքների ընթացքում երեխային ներկայացվում են նույն դիդակտիկ նպատակին ծառայող գիտելիքներ՝ տարբեր ոլորտներից: Ուսուցման կազմակերպման արդյունավետ ձև է **էքսկուրսիան**, ինչպես նաև դիդակտիկ խաղը: Այսօր աստիճանաբար մանկապարտեզ են մուտք գործում ուսուցման կազմակերպման նոր ձևեր՝

- Մտավոր խաղեր
- Խաղ-բանավեճեր
- Խաղ-մրցույթներ:

1.2 Ինտեգրված ուսուցում

<<Ինտեգրում>> (Integr-ամբողջ) – լատիներենից թարգմանաբար նշանակում է վերականգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ՝ ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Նշանակում է համատեղել գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից հավասար հիմունքներով՝ լրացնելով միմյանց (երաժշտության, նկարչության, խոսքի զարգացման միջոցով այնպիսի հասկացության դիտարկում, ինչպիսին է <<տրամադրությունը>>):

Ինտեգրված պարապմունքի համար կարևոր է նյութի ընտրությունը, ուսումնական միջոցների բազմազանությունը. ոչ բոլոր պարապմունքները կարելի է անցկացնել ինտեգրված մեթոդներով: Ինտեգրված պարապմունքներն նպատակաուղղված են տարբեր մեթոդների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրված տեղեկություններով, այլ՝ իրականությունը միջառարկայական կապերով: Ուստի պարապմունքների պրոցեսների ընթացքում միջառարկայական կապերի պահպանումն ունի բազմաբովանդակ խնդիրներ՝ սկսած երեխայի մոտ կարողությունների, հմտությունների ձևավորումից, վերջացրած՝ երեխայի մոտ ակտիվ մասնակցություն ցուցաբերելու ցանկություն սերմանելուց:

Ինտեգրված ուսուցումը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում է մեկ այլ, կամ մի քանի այլ առարկաներից վերցված գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված ինտեգրված պարապմունքի հետևյալ տեսակները՝

- Միջառարկայական- երկու առարկաների միջև՝օր. մաթեմատիկա-ապլիկացիա

- Բազմառարկայական- երկուսից ավել առարկաների միջև՝օր. մաթեմատիկա-ապլիկացիա-երաժշտություն

Ինտեգրված պարապմունքն ուղղված է թեմայի ամբողջական բացահայտմանը, գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ:

Նշենք նաև, որ ինտեգրված պարապմունքը պարապմունքի հատուկ տեսակ է , որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի պարապմունքի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան,որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված պարապմունքը կարող է միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ, օր.՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկաների ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը:

Մասնագիտական ուսումնասիրություններում մանրամասն վերլուծվել է ինտեգրված պարապմունքը՝ թե՛ բովանդակային, թե՛ կառուցվածքային կողմերով: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս դաստիարակը կարող է օգտվել ինտելեկտուալ քարտի մեթոդից: Ինտելեկտուալ քարտը որոշակի թեմայի բովանդակային ուսումնասիրման կառուցվածքային, տրամաբանական սխեմա է, որտեղ արտացոլվում են հանգուցային հասկացությունը կենտրոնում, իսկ օժանդակ հասկացությունները՝ հանգուցային հասկացության շուրջ: Մշակված քարտը հիմք է հանդիսանում տարբեր թեմաներով պարապմունքների հետագա մոդելավորման և անցկացման համար: Ինտեգրված պարապմունքին առաջարկվող թեմաներն են՝ <<Ջուր>> , <<Տարվա եղանակներ>>,<<Կենդանական աշխարհ>>, <<Իմ հայրենիք>>, <<Մարտի 8>>, <<Ամանոր>>, <<Անվտանգ վարքագիծ>> և այլն:

Բաժին 2. Գործնական մաս

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ: Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել ինտեգրված ուսուցման և ուսուցման փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդի արդյունավետությունը կրթադաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Հետազոտության խնդիրներն են ուսուցման ինտեգրված և ինտերակտիվ մեթոդների բացահայտումն ու արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ: Հետազոտական աշխատանքը կատարել եմ կրտսեր և ավագ տարիքային խմբերում:

2.1 Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը

Ինտեգրված պարապմունքները ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը: Ինտեգրված պարապմունքները կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, հնարամտություն. նախաձեռնողականություն, կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում: Ինտեգրված պարապմունքը ենթադրում է տարբեր մեթոդիկաների միջև կապերի ստեղծում, այսինքն, որևէ թեմա ուսումնասիրելիս ամփոփվում են տարբեր մեթոդիկաներից հարցեր, և երեխաները հասկանում են տարբեր մեթոդիկաների միջև գոյություն ունեցող կապերը: Ուսումնասիրվող թեմայի մեջ երեխաների հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելով ապահովվում է երեխաների հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ: Խաղի տարրը ինտեգրված դասի անբաժանելի մասն է:

Դաստիարակը ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս հաշվի է առնում հետևյալը.

- Թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին
- Ընտրված թեման նպաստում է երևակայության և ստեղծագործական մտածողության խթանմանը
- Ընտրված թեման անհրաժեշտ է անցնել այնպես, որ ապահովվի բոլոր երեխաների մասնակցությունը

- Երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու և որոշակի պատասխանատվություն կրելու
- Երեխաները կարողանան ավելացնել իրենց գիտելիքներն ու փորձը՝ միջավայրի, առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

<< Ինտեգրված պարապմունքները իրենց բազմազանությամբ ապահովում են երեխայի ամբողջական պատկերացումներն ու բազմազան կապերը՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև>>:

Լալա Սմբատյան
<<Նախաշավիղ>> 2015թ.

<< Երեխան ունի տեսնելու, մտածելու, զգալու իր հատուկ ունակությամբ: Չկա առավել անմիտ բան, քան նրանց այդ ունակությունը մերով փոխարինելու փորձը>>:

Ժան Ժակ Ռուսո
<<Նախաշավիղ 2>> 2016թ.

2.2 Ինտեգրված պարապմունքների պլան-կոնսպեկտ

Թեմա՝ <<Բանջարեղեն>>

Տարիքային խումբ՝ միջին

Նպատակ՝ Երեխաներին ծանոթացնել <<Բանջարեղեն>> ընդհանրացնող հասկացությանը, ամրակայել բանջարեղենի տեսակների անվանումները: Շարունակել սովորեցնել ներկել պատկերը՝ գծերը տանելով վերևից ներքև, ձախից աջ, և դուրս չգալ եզրագծից: Ամրապնդել հիմնական գույների մասին պատկերացումները, զարգացնել խոսքը, պատկերավոր մտածողությունը, մատների մանր մկանները:

Անհրաժեշտ պարագաներ՝ նկար՝ ապլիկացիայով, բանջարեղենի տեսակներ՝եզրագծով պատկերված սպիտակ թղթից, բանջարեղենի մույլաժով զամբյուղ, մոխրագույն ամառային մուշտակով փափուկ խաղալիք նապաստակ, սոսնձի վրձիններ, խոնավ անձեռոցիկներ, ներկերի համար փոքրիկ կանգուն անոթներ, նկարն ամրացնելու համար մոլբերտ, վեց հիմնական գույների ներկեր:

Նախնական աշխատանք՝ Վ. Սուտեևի <<Պարկով խնձորներ>> հեքիաթից մի հատվածի ընթերցում, նկարազարդումների դիտում:

Ընթացքը՝

Դաստիարակ – Ի՞նչ է թափված հատակին (գազար,լոլիկ,շաղգամ, բազուկ, վարունգ): Ինչպե՞ս կարելի է դրանք անվանել մեկ բառով:

Երեխաներ – Բանջարեղեն:

Դաստիարակ – Ի՞նչ եք կարծում՝ մենք կարո՞ղ ենք պարապմունք անցկացնել այսպիսի թափթփված վիճակում:

Երեխաներ – Ո՛չ:

Դաստիարակ – Եկե՛ք հավաքենք հատակի բանջարեղենը:

Հիմա լսենք հեքիաթը.

<<Լինում է, չի լինում մի մոխրագույն նապաստակ: Նա ուներ ընտանիք: Դուք ճանաչում եք նրա փոքրիկ ձագուկներին: Նա խնձորների պարկն ուսին գնում էր

տուն, բայց բոլոր խնձորները ճանապարհին բաժանեց անտառի գազանիկներին: Նրանք շնորհակալ եղան և նվերներ տվեցին: Նապաստակը նվերները բերեց ձագուկներին: Երկար ժամանակ ապրում էին նապաստակներն առանց նեղության, անտառի գազաններին բարի խոսքերով էին հիշում : Հետո նվերները, ուտելիքը վերջացան, և ձագուկները սկսեցին ուտելիք փնտրել: Նապաստակը ստիպված էր ընկերոջ մոտ գնալ: Ընկերը նրան մի ամբողջ զամբյուղ բանջարեղեն տվեց: Նա բանջարեղենը տանում էր ձագուկներին՝ անտառի ճանապարհով, և հանկարծ դուրս պրծավ գայլը: Նապաստակը գցեց զամբյուղը և փախավ: Բանջարեղենը թափվեց ճանապարհին, և մենք հավաքեցինք: Եկե՛ք դրանք դնենք զամբյուղի մեջ և սպասենք նապաստակին: Միգուցե նա վերադառնա զամբյուղի հետևից. չէ՞ որ նրա ձագուկները տանը քաղցած են>>

Դաստիարակն արտասանում է կատակ-ոտանավոր.

Զամբյուղում հարմար շարեք.

Բազուկը, շաղգամը, գազարը,

Լոլիկն ու վարունգը,

Եվ բոլորդ կեցցե՛ք:

Բանջարեղենի տեսակները դասավորել զամբյուղում՝ ասված կարգով:

Դաստիարակ – Բոլորը հավաքեցի՞ք, ոչինչ չթողեցի՞ք:

Երեխաներ – Ո՛չ:

Դաստիարակ – Մենք սովորեցինք նոր կատակ-ոտանավոր: Եկե՛ք նապաստակին կանչենք /երեխաները կանչում են նապաստակին/: Միգուցե նա վախենո՞ւմ է մեզնից՝մտածելով, որ մենք որսորդներ ենք: Եթե մենք դառնանք նապաստակներ, նա այլևս չի վախենա:

Երեխաները սկսում են թռչկոտել՝ ձեռքերը կրծքին սեղմած: Այնուհետև դաստիարակն առաջարկում է նրանց <<թաքնվել>> (նստել, կքանստել և ծածկել դեմքերը ձեռքերով): Խաղը կրկնվում է երկու անգամ:

Դաստիարակ – Ձեզնից հիանալի նապաստակներ ստացվեցին: Իսկականներից չէիք տարբերվում:

Այդ պահին սեղանի տակից դուրս է գալիս խաղալիք-նապաստակը, որի խոսքը հնչեցնում է դաստիարակը: Նա վախեցած է, դողում է:

- Դուք այստեղ գայլին չե՞ք տեսել:

Երեխաները հանգստացնում են նապաստակին և ասում, որ գայլը փախել է շատ հեռու:

Նապաստակ – Իսկ դուք զամբյուղ չե՞ք գտել: Երեխաները զամբյուղը վերադարձնում են նապաստակին:

Նապաստակ – Շնորհակալությո՛ւն:

Դաստիարակ – Տեսնու՞մ եք, նապաստակը որքան տխուր է: Նույնիսկ չուրախացավ, որ զամբյուղը գտնվել է : Երևի շատ է վախեցել գայլից: Եկեք ուրախացնենք նապաստակին՝ խաղանք նրա հետ:

Մատներով խաղ /կրկնվում է երկու անգամ/ .

Մենք զամբյուղի մեջ /մատներն իրար մեջ անցկացրած մեկնում են առաջ՝ պատկերելով կլոր զամբյուղ/

Հմտորեն կլցնենք /կատարում են շարժումներ աջ, ապա ձախ ձեռքով վերևից ներքև/

Շաղգամ, բազուկ, գազար, /բռունցք արած ձեռքերը ամեն մի բառի վրա/

Լոլիկ ու վարունգ: /եռանդով բացում և նորից բացում են ձեռք/

- Կեցցե՛ք: /ծափահարում են/:

Դաստիարակ – Երեխանե՛ր, հիմա մենք նկար ցույց կտանք նապաստակին: Տեղավորենք այն նկարակալի վրա:

Նապաստակ – Իսկ ինչո՞ւ են բանջարեղենի բոլոր տեսակները սպիտակ, չներկված: Երևի դուք չգիտեք, թե ինչ գույնի են դրանք:

Դաստիարակ – Ո՛չ, նապաստա՛կ, երեխաները գիտեն, թե ինչ գույնի են պտուղները:

Ցույց տալ եզրագծային պատկերը և հարցնել, թե ի՞նչ գույնի է այս կամ այն բանջարեղենը:

Դաստիարակ – Այժմ մենք կներկենք մեր բանջարեղենը և մեր նկարը կդարձնենք ավելի գունեղ ու գեղեցիկ: Ընտրե՛ք համապատասխան ներկը: Օրինակ, շաղգամը ներկելու համար ի՞նչ գույնի ներկ է ձեզ հարկավոր:

Երեխաներ – Դեղին:

Դաստիարակը երեխաներին հարց է տալիս, թե պտուղներից որն ինչ գույնով են ներկելու /<<Ես պետք է գունավորեմ գազարը, ինձ անհրաժեշտ է գազարագույն ներկ>>/: Ցույց է տալիս՝ ինչպես ներկել բանջարեղենը, որպեսզի նկարը լինի վառ և մաքուր: Հիշեցնում է գունազարդելու տեխնիկան:

Դաստիարակ – Դուք վերջացրի՞ք աշխատանքը: Ապա ցու՛յց տվեք ինձ ձեր ձեռքերը. տեսե՛ք, թե որքան բազմագույն են դրանք: Վերցրե՛ք խոնավ անձեռոցիկը և մաքրե՛ք: Նապաստակ, արդյո՞ք , մենք կարողանո՞ւմ ենք գունազարդել:

Նապաստակ – Կարողանու՛մ ենք: Ես նույնպես ուզում եմ սովորել գեղեցիկ գունազարդել:

Դաստիարակ – Մենք քեզ անպայման կսովորեցնենք: Եվս մեկ անգամ լսեք բանջարեղենի մասին ոտանավորը:

Երեխաներն արտասանում են ոտանավորը ևս մեկ անգամ:

Նապաստակ – Շնորհակալությո՛ւն, վազեմ ձագուկներիս մոտ, նրանք ինձ արդեն շատ սպասեցին:

Եզրակացություն

Ուսումնասիրելով ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում թեման, հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

- Յուրաքանչյուր երեխա ունի որակյալ կրթություն ստանալու իրավունք,
- Դաստիարակի առաքելությունն է դաստիարակել համակողմանի և ներդաշնակ զարգացած անձ,
- Ներկայումս նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել ակտիվ ուսուցման մեթոդները՝ ինտերակտիվ և փոխգործուն
- Ինտեգրված պարապմունքների արդյունավետությունն այն է, որ բոլոր երեխաները դառնում են գործուն, յուրաքանչյուրը զբաղվում է իր առանձնահատկություններին համապատասխան, իր համար ցանկալի աշխատանքով: Այստեղ տարբերվում է մի երեխայի գերակայությունը, մյուսների նկատմամբ:

Գրականության ցանկ

1. <<ՀՀ Սահմանադրություն>>

2. <<Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենք>>

3. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան՝ <<Ուսումնական ձեռնարկ>>, Երևան 2010

4. Ս. Մարության, Ա. Դալլաքյան << Նախադպրոցական մանկավարժություն>>, բուհական դասագիրք, Երևան 2008

5. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան, <<Ուսումնամեթոդական ձեռնարկ>>, Երևան 2013